ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 39-Լ «03» 10 2019թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՊԱՏՎՈԳՐԻ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ԹԻՎ 07-Լ ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը, <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի ժ3) ենթակետը, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը և ՀՀ վարչապետի 2019թ. հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 11-րդ կետի 22-րդ և 19-րդ կետի 20-րդ ենթակետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պարգևների ներկայացման և շնորհման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվոգրի և շնորհակալագրի ձևերը՝ համաձայն հավելված 2-ի:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019 թվականի մարտի 21-ի <<ՀՀ կրթության և գիտության նախարարության պարգևների ձևերը սահմանելու և պարգևների ներկայացման և շնորհման կարգը հաստատելու մասին>> թիվ 07-Լ հրամանը:
4. Մինչև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեդալների ձևերի սահմանումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մեդալներով պարգևատրում իրականացնելու համար օգտագործել ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից հաստատված մեդալները:

ՆԱԽԱՐԱՐ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

X _____